

ԲԱՆԱԿԻ ԵՐԿՈՒՆՔԸ

«Տղերք, ես հավատում եմ ձեզ, հավատում եմ, որ ունենալու եմք բանակ»:

ՎԱՃԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

անկախության, չխնայեցին իրենց կյանքը, շարերը արժանապան պետական բարձր պարգևների, Զիվան Արրահամյանին հեղմահու շնորհվեց ազգային հերոսի կոչում:

Զորամասը մարտական գործողություններում ցուցաբերած արիության, խիզախության համար ստացավ «Հափուկ» անվանումը, առաջիններից էր, որ մարտական դրոշ ունեցավ:

Գնդի կազմավորման, ամրապնդման, հայրենիքի պաշտպանության գործում իրենց ներդրումն ունեն նախկին հրամանատարներ՝ գնդապետներ Սերգեյ Առաքելյանը, Աշոտ Պողոսյանը, Վլադիմիր Կարապետյանը, Գուրգեն Մելքոնյանը, Համլետ Հովհաննիսյանը, փոխգնդապետ Ալբերտ Գալստյանը:

Գնդի անձնակազմը, մշտապես կառավարելագործելով մարտունակությունը, այսօր էլ պատրաստ է իրականացնելու ցանկացած մարտական առաջադրանք: Հարգելի զինակիցներ, հափուկ գնդի վեներաններ, ջերմորեն շնորհավորելով հայոց բանակի առաջին ստորաբաժանման ստեղծման 10-ամյա հոբելյանը, մաղթում եմ ձեզ քաջատղջություն, անձնական եւ ընտանեկան երջանկություն, խաղաղություն, նորանոր հաջողություններ ձեզ վստահված կարեւորագույն պարտականության՝ հայրենիքի պաշտպանության նվիրական գործում»:



Այժմ, երբ նշվում է հայկական առաջին գնդի ստեղծման տարելիցը, հետադարձ հայացք նետելով նրա անցած մարտական ուղուն, համոզվում ենք, որ եթե չլիներ այդ զորամասը, չլիներ անձնակազմի փառապանծ հաղթանակները, մեզ պարտադրված պատերազմը կձգձգվեր անորոշ ժամանակով. վրանգի կենթարկվեր հայոց պետականության կայացումը:

Հանրապետության սահմանները պաշտպանելիս՝ գունդը անցել է մարտական երկար, դժվարին ուղի՝ մասնակցել է Իջևանի, Նոյեմբերյանի, Կարմիրի, Կապանի պաշտպանությանը:

Զորամասը փառքով ու պատվով կապարեց իր առջեւ դրված մարտական խնդիրները. շնորհիվ հստակ գործողությունների, մարտիկների անձնագոհության ու հերոսության կարողացավ հաջողությամբ ավարտել հակառակորդի գերակշիռ ուժերի ջախջախումն ու ետ մղումը, Հայաստանի սահմանների անվտանգության ապահովումը:

Գնդի մարտիկներից շարերը, հանուն ազատության ու

Թնդում են պատերազմի թոհուրոհում ծնված, կամավորականներին խանդավառած, ռազմի դաշտ առաջնորդած մարտիկները: Ծարահրապարակով անցնում են հափուկ գնդի առաջին վաշտերը: Նրանց շարերը զգալիորեն նվազել են. շարերը անթայուպերով են, բայց ձեռքերից պինդ բռնած, ոմանք նաեւ գրկած փանում են իրենց մանկահասակ տղաներին, որոնք, շնայած այդ տարիքին, զինվորական համագրեստ են կրում, այդ տարիքից խորհրդանշում են հավատարմությունը հայրերի մղած պայքարին, անձնագոհությանն ու նվիրումին:

Թվում է՝ երեկ էր, երբ փոսական շքերթի մասնակիցները, որոնք արդեն քաղաքացիական հագուստներով են, ճերմակել են նկատելիորեն, վճռական, հանդուգն պատանիներ էին, տարերայնորեն կազմավորված ջոկատներով պաշտպանում էին Հայաստանի սահմանները: Սակայն Նոյեմբերյանի, Կապանի ողբերգական իրադարձություններից հետո համոզվեցին, որ առանձին-առանձին չեն կարողանա դիմագրավել թե՛ թվաքանա-

Այս օրերին համայն հայությունը՝ հայրենիքում թե արտերկրում, փոխում է Հայաստանի պետականության վերականգնման 9-րդ տարեդարձը: Մի քանի օր առաջ առանձնահատուկ շուքով ու հանդիսավորությամբ նշվեց հայկական առաջին զորամիավորման կազմավորման հոբելյանը՝ 10-ամյակը: Նշանակում է, մեր ժողովուրդը բանակ էր ստեղծել դեռեւս անկախության հռչակումից առաջ, խորհրդային գերիշխանության տարիներին: Ազգային միակ գունդը ամբողջ Միության տարածքում...

... Դասակ առ դասակ, վաշտ առ վաշտ պատվո փողանի են կանգնել գումարտակները: Ծարահրապարակը օղակում են հանրապետության տարբեր մարզերից ժամանած հյուրեր: Զորամասում բացառիկ ուրախություն է, փոքր: Ամբիոն են բարձրանում պաշտպանության նախարարության ղեկավարները, բարձրաստիճան սպաներ, որոնցից շարերն այս նույն զորամասում ծառայել են:

Հնչում է հանրապետության փառերգը: Բարձրախոսին է մոտենում ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Միքայել Հարությունյանը: Նա մասնավորապես ասում է.

«Հարգարժան գեներալներ, սպաներ, ենթասպաներ, հափուկ գնդի վեներաններ ու զինվորներ.

ՀՀ պաշտպանության նախարարության, զինված ուժերի ղեկավարության եւ անձամբ իմ կողմից շնորհավորում եմ հայկական բանակի առաջին ստորաբաժանման կազմավորման տարելիցը:

Ուղիղ տասը տարի առաջ այս օրերին, լիակատար շրջափակման պայմաններում, նկատի ունենալով երկրին սպառնացող վրանգի նախանշանները, որոշում ընդունվեց ստեղծել կանոնավոր զորամիավորում՝ ընդգրկելով կամավորական ջոկատների ազատամարտիկներին:

ՀԱՏՈՒԿ ՉԵՂԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 10-ՐԳ ՏԱՐԵԼԻՑԸ

էջ 3

կով, եւ թե՛ զինամթերքով գերակշռող հակառակորդին: Նրանք, անսալով իրենց ուղղված կոչերին, ընդամենը յոթ օրում միավորվեցին, ստեղծեցին այսօրվա հայկական բանակի հիմնասյունը, կուռ բռունցքը: Միասնականության ուժը շարժուի զգացվեց: Հափուկ գնդի մարտիկները ոչ միայն ոչնչացրին հանրապետության սահմանները շրջափակող, օր ու գիշեր դավեր նյութող ոստիսին, այլեւ վնասազերծեցին ներքին թշնամուն՝ հիսունից ավելի զինված հրոսախմբերի, որոնք, օգտվելով ստեղծված իրավիճակից, ահաբեկում էին խաղաղ ազգաբնակչությանը, թալանում համաժողովրդական ունեցվածքը:

Կամավորական մարտերգերին հաջորդում է բանակային քայլերգը: Շարահրապարակը մի պահ դադարվում է եւ ապա խիտ շարքերով անցնում են արդեն «մայրաքաղաքային» անվանումը կրող՝ ազգային բանակի լավագույն զորամասերից մեկի զինվորները: Նրանք ասես յուրովի են շարունակում հափուկ գնդի երթը, մարտական կեցվածքով ու քայլվածքով արտահայտում են հայոց բանակի հզորությունը, հայրենիքին անմնացորդ նվիրվելու, ցանկացած ոստիսի դեմ մարտնչելու, հաղթելու վճռականությունը:

Նրանցից մեկի՝ սերժանտ Վրեժ Մելքումյանի ելույթը երդման նման հափուկ, վճռական է հնչում.

«Պարոնայք գեներալներ, սպաներ, զինվորներ ու հյուրեր, մեզ համար մեծ պատիվ է ծառայել այս զորամասում, որովհետեւ մեր ավագ մարտընկերները նրա փաստամյա պատվությունը գրել են արյամբ, երբ հարկ է եղել՝ իրենց կյանքը չեն խնայել, բայց հաղթել են: Իսկ եթե հաղթել են, նշանակում է՝ լավ են կռվել: Ես զորամասի զինվորների անունից ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր ջանք չեն խնայել հափուկ գնդի ստեղծման ու հզորացման համար, նպաստել են մարտունակությանը:

Այս փոռական օրը մենք՝ մայրաքաղաքային զորամասի մարտիկներս խոստանում ենք հավաքարմորեն շարունակել հափուկ գնդի հիանալի ավանդույթները:

Մենք մեր զորամասի դրոշմն ու պատիվը միշտ բարձր կպահենք»:

Զինվորական շքերթից հետո հանդիսության մասնակիցներն ուղղվում են դեպի զորավանի կենտրոնում խոյացող խաչքարը, ծաղիկներ դնում պարվանդանին: Հուշակոթողը առանձնահատուկ շուքով, վեհությամբ է հավերժացնում հափուկ գնդի զոհված 125 մարտիկների սխրանքը:



միջոց չեն խնայելու, որպեսզի վերականգնեն գնդի վաճառական, ամբողջական պատվությունը՝ հայրենասիրության ու հերոսականության ավանդույթները փրկածելու են հափուկապես դպրոցականների, ուսանողների միջավայրում, նյութապես, բարոյապես ստեղծելու են հաշմանդամ մարտիկներին, զոհվածների հարազատներին:

Հայաստանի Հանրապետության առաջին զորամիավորմանը նվիրված հանդիսությունները ավարտվեցին ուշ երեկոյան՝ եռաբլուրում, որտեղ մասնակիցները խոնարհվեցին զոհված մարտիկների շիրմաքմբերի առջեւ, հարգանքի փոքր մատուցեցին նրանց հիշատակին, մարտունակության, հերոսականության ոգին գալիք սերունդներին փոխանցելու երդում փոխեցին: Իրականացավ Սպարապետ Վազգեն Սարգսյանի երազանքը: Տասը փարի առաջ ստեղծված Հափուկ գունդը

Մեւազգեստ մայրերն ու այրիները չեն կարողանում թաքցնել արցունքները: Հաղթանակի համար նրանք փոխեցին ամենաթանկը, որ ունեին՝ զավակներին, ամուսիններին: Նրանցից ոչ մեկը սակայն մոռացված չէ: Մայրաքաղաքային զորամասի հրամանատարը հյուրերին հրավիրում է նորաբաց թանգարանը, ուր փրկել են գրեթե զոհերի լուսանկարները, մանուկներ մարտական, անձնական իրերից: Ակնածանք, հպարտություն է հարուցում հափուկապես գնդի անցած ուղին պարկերոջ քարտեզը, ուղի, որը ձգվում է հանրապետության ամբողջ տարածքով՝ հյուսիսից հարավ: Իրավացի են այն փարիների զինվորները, որոնք սիրել են սրամտել:

—Առայժմ գերից գեր Հայաստանը պաշտպանենք, ծովից ծովի մասին հետո կմտածենք:
Հոբելյանական միջոցառումները շարունակվեցին 9. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում, որտեղ պաշտոնապես հայտարարվեց Հափուկ գնդի վերերանների միության ստեղծման մասին: Նրա անդամները ջանք,



հերզիներ համալրվեց, սպառազինվեց, ի վերջո ստեղծվեց այն բանակը, որին հույսով, հավատով է նայում համայն հայությունը:

Բանակը, որը հաղթել է, կկարողանա պաշտպանել նաեւ խաղաղությունը: